



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, 2018

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՒ ԽՍՍԵԼ ԵՒ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալ լիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 103

### ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

**Օ**րինաբանէ Տէրը, ո՛վ իմ անձս,  
եւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները:  
Ան է որ կը քաւէ բոլոր մեղքերդ,  
կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:  
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,  
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:  
Ան է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,  
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:  
Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,  
անպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,  
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը,  
եւ չի մոռնար որ հողեղէն ենք:  
Արդարեւ մարդուս կեանքը խոտի կը նմանի,  
կը ծաղկի այնպէս՝ ինչպէս վայրի ծաղիկը.  
Երբ խորշակը անոր վրայ կը փչէ՝  
ալ կը դադրի գոյութիւն ունենալէ,  
անոր տեղն իսկ չես գիտեր:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ

ԳԼՈՒԽ 5:6-13

## ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ (5:6-13)

Ամբողջ հապրումը մը սիրոյ մասին գրել է բացապրել յետոյ, որպէս հիմք Աստուծմէ ծնած ըլլալու գրաւական, Յովհաննէս Առաքեալ կը շարունակէ նախորդ հապրումը, ուր կ'ըսէր. «Ո՛վ կը յաղթէ աշխարհին, եթէ ոչ ան՝ որ կը հաւապայ թէ Յիսուսն է Աստուծոյ Որդին» (5:5): Իսկ թէ ո՛վ է այս Յիսուսը. «**Ինքն էր, Յիսուս Քրիստոսը, որ մեզ սրբելու եկաւ իր մկրտութեամբ եւ իր արիւնով**» (6 հմր): ուրեմն, մեր Աստուծմէ ծնած ըլլալու գրաւականի երկրորդ երեսը Քրիստոս Ինք է, որովհետեւ «**Ով որ կը հաւապայ թէ Յիսուս Աստուծոյ Օծեալն է՝ անիկա Աստուծմէ ծնած է**» (5:1): Այս մասին, իր իսկ նամակի սկիզբին Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ. «**Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով այն մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ ձեզի յայտնուեցաւ**» (1:2): Ուրեմն, խորքին մէջ Յովհաննէս Առաքեալին ըրածը ուրիշ բան չէ եթէ ոչ վկայել, ու մանաւանդ վկայել այն ինչ որ Սուրբ Հոգին Ինք վկայեց:

Սկսելու համար: Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ. «**Յիսուս Քրիստոսը մեզ սրբելու եկաւ իր մկրտութեամբ եւ իր արիւնով**» (6 հմր):

1. Սրբուելու, մաքրուելու կարիք ունինք:
2. Յիսուս Քրիստոս Ինք մեզ պէտք է սրբէ, սա կը նշանակէ, որ մենք ի վիճակի չենք մենք զմեզ սրբելու:
3. Մեզ սրբելու համար, Քրիստոս եկաւ, ուրեմն տեսանելի պատկերով:
4. Մեզ սրբելու Իր իսկ մկրտութեամբ եւ իր արիւնով:

1. Յովհաննէս Առաքեալ յարակօրէն ցոյց կու տայ, որ մարդ արարածը կարիքը ունի սրբուելու, մաքրուելու, եւ այս պարագային ոչ արարաբնի սրբութեան կամ մաքրութեան մասին է խօսքը, այլ՝ ներքին, հոգեւոր, այսինքն՝ մեղքէն սրբուելու եւ մաքրուելու:
2. Յովհաննէս Առաքեալ յարակօրէն ցոյց կու տայ, որ մարդ արարածը ի վիճակի չէր ինքզինք մաքրելու, սրբելու, այնպէս ինչպէս կը կարողանք ծննդոց գիրքին մէջ, երբ մեր նախահայրն ու նախամայրը մեղանչեցին, եւ փորձեցին իրենք իրենց մերկութիւնը ծածկել թզենիի փերեւներով, բայց Աստուծոյ իրենց կաշիէ հանդերձներ տուաւ իրենց մրեկութիւնը ծածկելու (Ծննդ 3:21):
3. Յովհաննէս Առաքեալ որպէս պատասխան բոլոր անոնց որոնք կը մերժէին Քրիստոսի մարդեղութիւնը, կու գայ ցոյց տալու, թէ Ան եկաւ, մարմնացաւ, մարդացաւ, որպէսզի անով կարենայ մկրտուիլ, որպէսզի անով կարենայ խաչուիլ: Այլ խօսքով՝ իսկական մարդ, փակաւին առաւել եւս կարարեալ մարդ պէտք էր եղած ըլլար Քրիստոս որպէսզի ոչ թէ միայն մկրտուէր ու խաչուէր, այլ Իր իսկ մկրտութեամբ մենք կարենայինք սրբուիլ ու մաքրուիլ:
4. Այդ մաքրութիւնը, սրբութիւնը փեղի ունեցաւ մկրտութեամբ եւ Իր արիւնով, այսինքն՝ խաչելութեամբ: Ահա Քրիստոսի մկրտութեան պահուն էր, որուն մասին Յովհաննէս Մկրտիչ տուաւ հետեւեալ վկայութիւնը. «Տեսայ Հոգին, որ դաւանիի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը հանգչէր անոր վրայ: Այո, ես չէի ճանչնար զինք, բայց ան՝ որ զիս դրկեց ջուրով մկրտելու, ըսաւ ինձի. "Որուն վրայ որ տեսնես թէ կ'իջնէ ու կը հանգչի Հոգին, անիկա է որ Սուրբ Հոգով պիտի մկրտուի": Ես տեսայ արիկա եւ կը վկայեմ թէ ինքն է Աստուծոյ Որդին» (Յովհ 1:32-34): Իսկ Եբրայեցոց նամակին մէջ կը կարդանք. «**Անիկա միանգամընդմիջը մտաւ Սրբարանը, ոչ թէ նոխազներու եւ ցուլերու արիւնով, այլ՝ իր իսկ սեփական արիւնով, անով մեզի համար յաւիտենական փրկութիւն ապահովելով**» (Եբր 9:12): Ինքն է, Յիսուս Քրիստոսը: Անուն եւ ազգանուն չէ, այլ՝ Յիսուս անձը, եւ Քրիստոս՝ Մեսիան, Օծեալը:

«**Ոչ միայն ջուրով, այլ՝ ջուրով եւ արիւնով**» (1 հմր): Ինչո՞ւ այս շեշտադրումը: Աւերարաններուն մէջ կը կարդանք, որ Յովհաննէս Մկրտիչ արդէն ջուրի մկրտութիւն կ'ընէր, բայց ինք չէր Մեսիան, այսինքն՝ Օծեալը: Անոր համար ալ Յովհաննէս Առաքեալ կը շեշտէ, ոչ միայն ջուրով, այլ՝ ջուրով եւ արիւնով: Ընդ այդ իսկ նպատակով, երբ Քրիստոս եկաւ մկրտուելու, որպէսզի անով երբ մենք կը մկրտուինք, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, Քրիստոսի հետ կը թաղուինք, ու Անոր մահուան հաղորդակից կը դառնանք, այնպէսզի ինչ մարդը թաղելու, եւ Քրիստոսի հետ նոր մարդը յարութիւն առնելու:

Ահա Յիսուս Քրիստոսի Որդիութեան ու Մեսիան ըլլալուն վկայութիւնը նոյնինքն Սուրբ Հոգին Ինք է որ կը վկայէ այդ ճշմարտութիւնը, որովհետեւ Սուրբ Հոգին Ինք իսկ ճշմարտութիւնն է (7 հմր): Ուրեմն հիմա ունինք երեք վկաներ. Սուրբ Հոգին, մկրտութեան ջուրը եւ արիւնը, որոնք նոյն վկայութիւնը կու փան Քրիստոսի համար: Եբրայական մտածողութեան մէջ կայ հետեւեալը. հոն ուր երկու կամ երեք հոգիներ նոյն բանը կը վկայեն ուրեմն ընդունելի է այդ փրուած վկայութիւնը:

Յովհաննէս Առաքեալ օգտագործելով փութեալ փրամաբանութիւնն ու ընդունուած ձեւը, որ երկու կամ երեք հոգիներ եթէ նոյն վկայութիւնը փութին, եւ այս պարագային մարդկային վկայութիւն, չնայած, այդ վկայութիւնը կրնայ սուր կամ սխալ ալ ըլլալ, հարց կու փայ, ըսելով. «**Եթէ մարդոց վկայութիւնը կ'ընդունինք, ի՞նչպէս չընդունինք Աստուծոյ վկայութիւնը, որ ատելի մեծ է. իսկ Աստուծոյ վկայութիւնը՝ իր Որդիին համար փութ վկայութիւնն է**» (9 հմր): Որ անսխալական է այդ վկայութիւնը: «**Ով որ Աստուծոյ Որդիին կը հաւատայ՝ իր մէջ ունի այս վկայութիւնը. իսկ ով որ չի հաւատար՝ սրախօս կը հանէ զԱստուած, որովհետեւ չի հաւատար այն վկայութեան, որ Աստուած Իր Որդիին համար կու փայ: Իսկ փրուած վկայութիւնը սա է, թէ Աստուած յաւիտենական կեանք փութաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է**» (10-11 հմր): Պարզ ու յստակ բացատրութիւն: Քրիստոս նոյնը պիտի ըսէ Մարթային Ղազարոսի մահուան առիթով. «**Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի: Իսկ ան որ ողջ է եւ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի**» (Յովհ 11:25-26): Տակաւին, «**Ես եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը: Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ**» (Յովհ 14:6):

Հետեւաբար, «**Ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ ով որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի**» (12 հմր): Որովհետեւ յաւիտենական կեանքը նոյնինքն Քրիստոս Ինք է:

Այս նամակը կը գրէ Յովհաննէս Առաքեալ, անոնց, որոնք Աստուծոյ Որդիին կը հաւատան, այսինքն՝ իբրեւ Աստուծոյ Որդին կ'ընդունին, անով ապահով ըլլալու համար որ յաւիտենական կեանք ունին: Այս նամակի սկիզբին ալ Առաքեալը կը գրէր ըսելով. «**Մեր փեսածն ու լսածը կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կարարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը**» (Ա Յովհ 1:3-4): Յովհաննէս Առաքեալ իր ատերարանի գրութեանց մէջ ալ պիտի ըսէ. «**Այսքանը գրուեցաւ, որպէսզի հաւատաք թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստուծոյ Որդին, եւ իրեն հանդէպ ձեր ունեցած հաւաքին միջոցաւ յաւիտենական կեանք ունենաք**» (Յովհ 20:31): Կարարեալ ուրախութիւնը այն է, որ յաւիտենական կեանք ունինք: